...Այդ կուսակցությունների, ձեռներեցների և այլն և ուրիշների հաջողությունները պետք է որ ազգի, ասել է՝ մեր բոլորիս հաջողությունը լինեին. ապարանքներ են բարձրացել, կուտակումներ են եղել, կուսակցություններ ու խմբեր են ձևի եկել և այլն: Բայց ամբողջ անհեթեթությունն այն է, որ ամբողջը դրանից չի ուժեղացել, ամբողջը որպես այդպիսին դադարել է լինելուց, որ ամբողջի մասերն այլևս միմյանց չեն պատկանում, մենք այլևս չենք պատկանում միմյանց:
Միմյանց դեմ տարած փայլուն հաղթանակներով ասպարեզում մի ծվատված երկիր ենք թողել՝ որ մեզ որպես խորթերի է նայում և մենք էլ իրեն՝ որպես օտարի: Որպեսզի այդպես չլիներ, որպեսզի մենք բոլորս գտնեինք միմյանց, միմյանց պատկանեինք... Բայց դա չի եղել ու չի լինի. Վազգենը նրա համար չի սպանվել՝ որ միմյանց հայացքներում դարձյալ հայրենիք կարդանք...

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Շորեքշաբթի
31 մարտի 2021թ.
№ 6 (548)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Հայկական տարածքների խնդիրը 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերում. հայացք 100 տարի անց

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն

1920 թ. թուրք-հայկական պատերազմը: 1920 թ. ապրիլից միջազգային մթնոլորտը սկսեց էապես փոխվել: Դա պայմանավորված էր Թուրքիայում և Ռուսաստանում տեղի ունեցող փոփոխություններով: Պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո այն մասնատելու հաղթանակած Անտանտի երկրների քաղաքականությունը դժգոհություն առաջացրեց թուրք ազգայնական շրջաններում: Համախմբվելով Մուստաֆա Քեմալի շուրջը՝ նրանք դեռ 1919 թ. հաստատվեցին Անկարայում և, չճանաչելով սուլթանական կառավարությանը, շարժում ծավալեցին Թուրքիան մասնատումից փրկելու ուղղությամբ: 1920 թ. հետզհետե ամրապնդվեց Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական իրավիճակը: Վերջինս հաղթանակներ տանելով Դենիկինի և Կոլչակի դեմ՝ մոտեցավ Անդրկովկասի սահմաններին: «Սոցիալիստական» հեղափոխությունը սկսեց արտահանվել դեպի Արևելքի երկրներ՝ ռազմական ճանապարհով: Դրան սկսեցին նպաստել Անդրկովկասի բոլշևիկները, որոնք իրենց երկրների փրկությունը տեսնում էին խորհրդայնացման մեջ: Անդրկովկասի երկրների խորհրդայնացման հարցում Քեմալը փորձեց Լենինի կառավարությանը առաջարկել իր ծառայությունները՝ իր հերթին հույս ունենալով ստանալ Ռուսաստանի աջակցությունը Անտանտի դեմ պայքարում: Խորհրդային ղեկավարությունն իր կողմից Անտանտի երկրներին համարում էր սոցիալիստական հեղափոխության և Ռուսաստանի թշնամիներ, ուստի չհապաղեց դաշնակցել քեմալականների հետ: Արդեն 1920 թ. ապրիլի 28-ին Քեմալի բավական գործուն աջակցությամբ մուսավաթական Ադրբեջանն առանց դիմադրության ընդունեց 11-րդ կարմիր բանակին և խորհրդայնացավ: Ռուս-քեմալական համագործակցությունն սկսեց ընդունել ավելի գործուն ձևեր: Լենինի կառավարությունը 1920 թ. Թուրքիային տրամադրեց 200 կգ ձուլածո ոսկի, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձեց Ռուսաստանի հետ հաստատել բարիդրացիական հարաբերություններ: Մոսկվա ուղարկվեց հատուկ պատվիրակություն Լևոն Շանթի ղեկավարությամբ: Հայ-ռուսական բանակցություններն ընթանում էին բավական հաջող: Սակայն քեմալականներն ու խորհրդայնացած Ադրբեջանը ամեն կերպ խոչընդոտում էին հայ-ռուսական բարեկամական պայմանագրի ստորագրմանը: Մայիսին սկսված բանակցություններն ի վերջո ընդհատվեցին՝ Երևանում շարունակելու որոշմամբ:

1920թ. մայիսին կարմիր բանակը մտավ Ղարաբաղ, հունիսին՝ Զանգեզուր, իսկ օգոստոսին՝ Նախիջևան: Հայկական բանակը չխոչընդոտեց: Օգոստոսի 10-ին՝ նույն Սևրի դաշնագրի կնքման օրը, Թիֆլիսում կնքվեց հայ-ռուսական համաձայնագիր, որով Հայաստանը համաձայնվում էր վերոհիշյալ 3 գավառների ժամանակավոր գրավմանը ռուսների կողմից իբրև հայ-ադրբեջանական վիճելի տարածքների:

1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում համաձայնեցվեց ռուս-թուրքական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի նախագիծը, որով Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի ամբողջականությունը, այդ թվում՝ Կարս, Արդահան և Բաթում քաղաքներով, այսինքն՝ 1877 թ. սահմաններով: Ըստ էության օգոստոսի 24-ի համաձայնագիրը ուղղված էր

Շարունակությունը՝ էջ 3

Օ՜, իմ հեռու, կապուտաչյա
սիրուհի,
Երկիր իմ որբ, արնաքամ
ու ավերակ...
Օրերում այս տառապանքի
ու մահի
Վառել է իմ սիրտը հեռու
մի կրակ:
Օրը կգա: Ու հեռավոր
դաշտերից
Մեր հնձվորները, հոգնաբեկ,
կգան տուն:
Կբոլորեն սեղանի շուրջը նորից,
Ու կլինի հազար ծիծաղ
ու խնդում:
Ու խնջույքում աներեւույթ
դու կգաս,
Սիրտս կզգա քո թովչությունը
մոտիկ.
Եվ չես լինի դու արնավառ
մի երազ,
Ու կխնդան քո զավակներն
անոթի...
Կտեսնես քեզ հանկարծ լուսե՜
ու պայծառ,
Ու կլինես դու հարազատ
ու անուշ:
Մութը կանցնի, ու մառախուղը
անծայր
Հուշ կդառնա, հնամենի
մի զրույց...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Քննարկվել է Սյունիքում իրականացվող անվտանգության միջոցառումների հարցը

Մարտի 23-ին կայացել է ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի և ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի հեռախոսազրույցը:

Դաշնակից երկու երկրի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները քննարկել են հայկական զինված ուժերում մեկնարկած լայնածավալ բարեփոխումների հիմնական ուղղությունները, հայ-ռուսական ռազմական համագործակցության, մասնավորապես՝ համատեղ զորախմբերի միասնական գործողությունների հետ կապված հարցեր, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում ռուսական խաղաղապահ զորախմբի կողմից իրականացվող առաքելության ընթացքը:

Հեռախոսազրույցի ընթացքում հատուկ անդրադարձ է կատարվել Սյունիքում իրականացվող անվտանգության միջոցառումներին:

* * *

Մարտի 23-ի երեկոյան կայացել է ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի և ՌԴ ՀՈՒ ԳՇ պետ, բանակի գեներալ Վալերի Գերասիմովի հեռախոսազրույցը, որի ընթացքում քննարկվել են հայ-ռուսական ռազմական համագործակցությանն առնչվող, մասնավորապես՝ հայ-ռուսական համատեղ զորախմբերի միասնական գործողությունների, ինչպես նաև Սյունիքի անվտանգային խնդիրների լուծման հետ կապված մի շարք հարցեր:

Անդրադարձ է կատարվել հայկական զինված ուժերի արդիականացման և լայնածավալ բարեփոխումների ծրագրերին: Վաղարշակ Հարությունյանն ու Վալերի Գերասիմովը պայմանավորվածություն են ձեռք բերել նշված հարցերի շուրջ առավել հանգամանալից քննարկումների նպատակով մոտ ժամանակներս ՌԴ բարձրաստիճան պատվիրակության Հայաստան այցի և բանակցությունների անցկացման վերաբերյալ:

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ. «Ինձ համար սեւ ու սպիտակ չկա, ինձ համար գերխնդիրը Սյունիքի անվտանգության ապահովումն է, ազգային արժեքների հիման վրա հայոց պետության ինքնիշխանության եւ պաշտպանվածության ամրապնդումը»

Հայաստանի Հանրապետության եւ հատկապես Սյունիքի նորագույն պատմության ամենավճռորոշ ու ճակատագրական ժամանակաշրջանում Սյունիքի մարզպետ նշանակվեց Մելիքսեթ Պողոսյանը, ով մինչ այդ՝ կարճ ժամանակամիջոցում, զբաղեցրել է Սյունիքի փոխմարզպետի պաշտոնը, իսկ ավելի վաղ վարել զինվորական տարբեր հրամանատարական պաշտոններ: Հանրությանն առավել հայտնի է Արցախյան երեք պատերազմին ակտիվ մասնակցությամբ: Վերջին չորս տարում միաժամանակ գլխավորում է ԵԿՄ Սյունիքի մասնաճյուղը:

Եվ ահա լրացել է պաշտոնավարման հարյուր օրը (մարզպետ էր նշանակվել ՀՀ կառավարության 2020 թ. դեկտեմբերի 8-ի որոշմամբ), ինչն էլ առիթ եղավ զրուցելու Մելիքսեթ Պողոսյանի հետ:

Հարյուր օրվա խորհուրդը, անշուշտ, ե՛ւ կարեւոր է, ե՛ւ կառավարման ավանդույթներին համահունչ, բայց առավել հետաքրքրական է Սյունիքում ստեղծված իրավիճակի տեսանկյունից:

– Պարոն մարզպետ, թող տարօրինակ չթվա, բայց Ձեզ չենք հարցնելու, թե կոնկրետ ի՞նչ գործեր են արվել անցած հարյուր օրում՝ մարզպետի գործառույթներից բխող: Այդ մասին, որքանով տեղյակ ենք, Սյունիքի մարզպետարանը մամուլի հաղորդագրություն է տարածել՝ հանգամանալից շարադրանքով: Մեզ առանձնապես հետաքրքրում են հարցերը, որոնք ոչ սովորական մեր օրերում հետաքրքրում են սյունեցիներին, որոնք գուցեեւ չեն բխում մարզպետի պաշտոնական գործառույթներից, բայց գերակա են եղել ու կան սյունիքյան ներկա զարգացումներում:

Եվ այսպես՝ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետն արձանագրում է. «Տարածաշրջանում բոլոր տնտեսական եւ տրանսպորտային կապերն ապաշրջափակվում են: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տրանսպորտային կապերի անվտանգությունը Ադրբեջանի Հանրապետության արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ՝ երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ ապրանքների անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու համար: Տրանսպորտային հաղորդակցության հսկողությունն իրականացնում են ՌԴ ԱԴԾ Սահմանապահ ծառայության մարմինները: Կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունը եւ Ադրբեջանի արեւմտյան շրջանները կապող տրանսպորտային նոր ուղիների շինարարությունը»:

Այդ պայմանավորվածությունն առավել մանրամասնված է 2021 թ. հունվարի 11-ի եռակողմ հայտարարության մեջ:

Այն, որ փաստաթղթերն ակնհայտ ոչ հայանպաստ են, տեղյակ եք: Բայց բոլորիս մտահոգում է առանձնապես նոյեմբերի 9-ի պայմանավորվածության 9-րդ կետը: Ձեր դիրքորոշումը:

– Հայաստանի, Ադրբեջանի եւ ՌԴ փոխվարչապետների մակարդակով ներկայումս բանակցություններ են ընթանում նաեւ այդ խնդրի շուրջ, ուստի եւ պիտի սպասենք բանակցությունների ավարտին, հարցի որոշակիացմանը, որից հետո հետեւություններ կանենք:

Միեւնույն ժամանակ՝ դեմ եմ միջանցքի գաղափարին, բայց հաղորդակցության ուղիների վերաբացմանը կողմնակից եմ: Ընդ որում՝ պարտադիր պայման պիտի լինի, որ վերաբացվող ճանապարհը վերահսկվի Հայաստանի Հանրապետության կողմից:

– 2020 թ. նոյեմբերի 9-ի եւ 2021 թ. հունվարի 11-ի եռակողմ հայտարարություններից բացի, պարզվեց, կա նաեւ հավելյալ հուշագիր, որ պարտադրեց մեզ՝ դեկտեմբերի 18-ին թողնել մեր մարտական դիրքերը եւ հետ քաշվել ու կանգնել նախկին՝ Խորհրդային Միության սահմանի վրա, Զանգելանը եւ Կուբաթլին զիջել, այն դեպքում, երբ նոյեմբերի 9-ի հայտարարությունում հստակ ասված էր՝ կողմերը կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում:

– Մենք ցավով ենք հետ քաշվել, քանի որ մեր անվտանգությունն ապահովող նպաստավոր բարձունքներում էինք դիրքավորվել, ինժեներական կառույցներ ստեղծել: Նույնիսկ ռուսական կողմն է փորձել կասեցնել այդ պարտադրանքի կատարումը, բայց չի հաջողվել: Արդյունքում՝ մեր անվտանգությունը որոշ հատվածներում դարձել է խոցելի...

– Հաջորդ հարցը սահմանորոշման ոլորտին է առնչվում. ցավոտ շատ խնդիրներ են կուտակված՝ կապված որոշ տարածքների, ճանապարհահատվածների կորստի հետ: Մի շարք դեպքերում խոսում են ակնհայտ զիջումների մասին: Կան տարածքներ, որ խորհրդային շրջանում մերն են եղել, բայց հիմա հակառակորդ պետությանն են անցել՝ Շուռնուխ, Որոտան գյուղերի վարչական տարածքների մի մասը... Այդ մասին, կարծեք, տեղյակ է ամբողջ հանրապետությունը: Եվ ի՞նչ է ձեռնարկվում իրավիճակը շտկելու ուղղությամբ:

– Չտարբերակենք Շուռնուխ, Որոտան... Սյունիքի յուրաքանչյուր հողակտոր եւ բնակավայր ինձ համար սրբություն են:

Մարզն ունի 506 կմ պետական սահման. արեւելյան կողմը՝ 300 կմ, Պարսկաստանի հետ սահմանը՝ 46 կմ, Նախիջեւանի կողմը՝ 160 կմ:

Հատկապես արեւելյան ուղղությամբ բազմաթիվ կնճիռներ ունենք:

Վիճելի հարցեր ունենք Գորիս-Կապան մայրուղուն առնչվող հատվածներում:

Եվ դրանցից ամեն մեկը կարեւոր է, դա հարցերի այն խումբն է, որոնց թվում երկրորդական ոչինչ չկա:

Կա իրողություն՝ GPS-ային սահմանազատումը մի շարք դեպքերում ի վնաս մեզ է կատարվել եւ հակառակորդի քմահաճությամբ, որի արդյունքում նաեւ դիրքային ոչ բարենպաստ փոփոխություններ են կատարվել:

Կամ՝ մարդը ժամանակին օգտվել է սեփականաշնորհումից, ստացել վկայական, տարիներ շարունակ հողի հարկը վճարել, բայց հիմա զրկվել է դրանից:

Դիմել եմ եւ բանակին, եւ ԱԱԾ-ին, եւ կառավարությանը...

Կարծում եմ՝ Սյունիքի արեւելյան սահմաններն ամբողջ երկարությամբ պետք է ճշգրտվեն, վիճելի որեւէ հարց չպիտի մնա...

– Այդ բոլորով հանդերձ՝ ինչպե՞ս եք գնահատում Սյունիքի սահմանների պաշտպանվածությունը:

– Գաղտնիության նկատառումներից ելնելով՝ միայն կարող եմ ասել՝ ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ Սյունիքի անվտանգության պատշաճ ապահովման համար:

Իսկ Գորիս-Կապան եւ Կապան-Ճակատեն մայրուղիները վերահսկվում են ՌԴ ԱԴԾ Սահմանային զորքերի ստորաբաժանումների կողմից:

Ունենք նաեւ բազմաթիվ հարցեր, որոնք աստիճանաբար լուծվում են: Համոզված եմ՝ ժամանակի ընթացքում ավելի հստակ եւ ավելի ուժեղ պաշտպանական համակարգ

ենք ունենալու սահմանի ամբողջ երկարությամբ:

Սյունիքի ռազմավարական դերն ու նշանակությունը պատճառ են, որ երկրամասի անվտանգությամբ ավելի ակտիվ զբաղվի նաեւ ՌԴ-ն. այդ հարցը, հավանաբար տեղյակ եք, քանիցս քննարկվել է Ռուսաստանի եւ Հայաստանի պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների միջեւ:

– Ամենատարօրինակն այն է, որ Սյունիքի մարզի վերաբերյալ մեկ օրվա մեջ լինում են իրարամերժ տարբեր տեղեկատվություններ: Մի՞թե հնարավոր չէ տեղեկատվական այդ հոսքերը կանոնակարգել, կենտրոնացնել, որովհետեւ մարդիկ երբեմն չգիտեն՝ ում հավատալ, ում՝ ոչ: Եվ այս ամենի հետեւանքով է նաեւ ծնվում խուճապը: Եվ տխուրն այն է, որ այս գործին լծվել են մարդիկ՝ անձնական նկատառումներով առաջնորդվող: Երբեմն այդ հարթակներից Սյունիքի անունից մարդիկ են խոսում, ովքեր իրենց «անկեղծությամբ», մեղմ ասած, չեն փայլում եւ կասկածների տեղիք են տալիս:

– Գաղտնիության ռեժիմը խախտվել է մեզանում, իսկ ոչ հավաստի տեղեկատվությունը մարդկանց խուճապի մեջ է գցում: Ես անթույլատրելի եմ համարում նման դրսեւորումները: Այն վայրերը, որ ռազմավարական գաղտնիք են պարունակում, չպիտի լուսաբանվեն, այլապես հակառակորդին տեղեկություններ ենք մատուցում՝ ընդդեմ մեզ: Խոսքս չի վերաբերում խոսքի ազատության սահմանափակմանը: Ռազմական գաղտնիքն առօրյա տեղեկատվությունից զանազանելու խնդրի մասին եմ խոսում: Խոսքի ազատությունը չպիտի շփոթել ամենաթողության հետ: Սա նաեւ մարտական դիրքերում գտնվողներին է վերաբերում: Զինվորը դիրքից զանգում է, թե այսինչ տեղում եմ գտնվում, այսինչ գործով եմ զբաղված...

– Ստեղծված իրավիճակը, սակայն, իր մեջ բազմաթիվ խութեր ու հարցականներ է պարունակում: Օրինակ, մամուլում տեւական ժամանակ ենթադրություն է հայտնվում, թե հասարակությունից թաքցվում է Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ (Ռուսաստանի միջնորդությամբ) ձեռք բերված պայմանավորվածությունը՝ Սյունիքի մարզի ճանապարհների առանձին հատվածների անվտանգության ապահովմանն առնչվող:

Դուք, որպես մարզի թիվ 1 պետական պաշտոնյա, տեղյա՞կ եք արդյոք՝ գոյություն ունի՞ Ադրբեջանի հետ ստորագրված առանձին փաստաթուղթ՝ Սյունիքի մարզում սահմանազատման վերաբերյալ:

– Դա իրականությանը չի համապատասխանում: Առհասարակ նման չճշտված տեղեկություններին չպետք է հավատալ եւ նշանակություն տալ:

– Մելիքսեթ Արամի, Արցախյան առաջին պատերազմի, 2016-ի ապրիլյան օրերի փառապանծ հրամանատարներից եք: Ձեր մարտական ընկերների արյամբ ազատագրված Արցախի մեծագույն մասն անցել է թշնամուն: Պատկերացնում ենք Ձեր ապրումները...

– Մեջս մի մեծ բան է ջարդվել... Բայց մենք տերն ենք հայոց պատմական ժառանգության:

Եղել ու մնում եմ այն մարդկանցից մեկը, որոնց համար Արցախյան երազանքը վեհագույնն է:

Հավատում եմ՝ Հադրութը, Շուշին վերադառնալու են հայոց Արցախի գիրկը:

Հավատում եմ նաեւ՝ վերականգնվելու է հայոց ազգային բանակը՝ իր փառահեղ ոգով ու մարտական պատրաստվածությամբ, արդիական սպառազինությամբ:

– Թուրք-ազերիները չեն թաքցնում հավակնությունները Սյունիքի հանդեպ, ժամանակ առ ժամանակ բռունցք են ցույց տալիս, արդեն իսկ պղծում են մեր սրբությունները: Իսկ մեր կողմից միայն արտգործնախարարության խոսնակի ոչինչ չասող արձագանքն ենք լսում: Ինչպե՞ս հասկանալ:

– Շատ ծանր է այդ ամենը լսել կամ տեսնել: Դարեր շարունակ Սյունիքը չի խոնարհվել ոչ մի թշնամու առջեւ, իսկ այսօր՝ սյունեցին դա թույլ չի տա...

– Շատերը Ձեզ մեղադրում են Նիկոլ Փաշինյանի կառավարության հետ համագործակցելու եւ հայտնի կապիտուլյացիայից հետո Սյունիքի մարզպետի պաշտոնը ստանձնելու համար:

– Նախ՝ Սյունիքի մարզպետի պաշտոնը դժվարագույն այս ժամանակաշրջանում ինձ համար առաքելություն է: Միգուցե նախկինում դա վայելելու պաշտոն է եղել (ինչը եւ ոմանք չեն կարողանում մոռանալ), բայց հիմա... հիմա դա մարտադաշտի պես մի բան է:

Ես չէի կարող մերժել առաջարկությունը, մանավանդ որ մարտական ընկերներս նույնպես պահանջում էին: Հակառակ պարագայում դա պատասխանատվությունից խուսափելու, մարտադաշտից փախչելու նման մի բան կնշանակեր:

Երկիրը, Սյունիքը լարված վիճակում էին եւ շարունակում են մնալ այդպիսին, ու ես պարտավոր էի հնարավորություններիս չափով ծառայել Հայաստանի Հանրապետությանը:

Ի՞նչ անեի, կողք կանգնեի եւ կողքից խոսողի դե՞ր ստանձնեի: Չէ, դա իմ ճանապարհը չէ: Նույն Մելոն եմ, կաբի-

Կնետում նստող անձնավորություն չեմ, դաշտային հրամանատար եմ եղել՝ անհանգիստ բնավորությամբ, ամեն լավ բանի համար ուրախացող: Ազգիս ճակատագիրն իմ ճակատագիրն եմ համարել ու համարում, ուստի եւ չէի կարող առաջնագծում չլինել:

Կողքից խոսողները, եթե իսկապես ցավում են Սյունիքի համար, թող գան ու միասին գործենք, պատրաստ եմ համագործակցության ամեն մի տարբերակի: Իմ խնդիրն այս կամ այն կուսակցությանը, այս կամ այն անհատին ծառայելը չէ: Գերխնդիրս Սյունիքի անվտանգության ապահովումն է, ազգային արժեքների հիման վրա հայոց պետության ինքնիշխանության եւ պաշտպանվածության ամրապնդումը, հանուն ինչի կգործեմ մինչեւ վերջ:

– ՀՀ վարչապետի 2021 թ. հունվարի 15-ի որոշմամբ ստեղծվել է Միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ Սյունիքի մարզում առկա խնդիրներով զբաղվելու նպատակով:

Երեք ամիս է անցել, կարո՞ղ եք արդյունավետ համարել աշխատանքային խմբի գործունեությունը:

– Պարբերաբար նիստեր են գումարվում Սյունիքում: Կոնկրետ հարցեր են քննարկվում ամեն անգամ՝ առաջարկություններով ու որոշումներով, որոնք ուղարկվում են ՀՀ կառավարություն, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն, այլ գերատեսչություններ:

Մինչեւ այսօր քննարկված հարցերի շրջանակը՝ դրանցից բխող քայլերով, մեծ է եւ սույն հարցազրույցում թվարկումները տեղին չեն: Բայց եւ կարող ենք արձանագրել՝ նոր իրավիճակում Սյունիքում առաջ եկած որեւէ հարց դուրս չի մնում Միջգերատեսչական աշխատանքային խմբի ուշադրությունից: Այլ բան է, թե որքանով են ընդունված որոշումները, առաջարկությունները կյանքի կոչվում: Դրանում, խոստովանեմ, մտածելու բան ունենք...

– Պարոն մարզպետ, տարիներ շարունակ, երբ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենը երջանկահիշատակ Մաքսիմ Հակոբյանն էր, տարեկան մոտ երկու միլիարդ դրամ ուղղվում էր Սյունիքի մարզի հրատապ խնդիրների լուծմանը եւ սոցիալ-տնտեսական զարգացմանը: 2014 թվականից, երբ այլեւս Մաքսիմ Հակոբյանը չէր գլխավորում կոմբինատը, մարզին գումարների հատկացումն էականորեն պակասեցվեց, եւ կառավարության կողմից ստեղծվեց Սյունիքի զարգացման ու ներդրումների հիմնադրամ, որի հետագիծն այդպես էլ չի երեւում: Հետաքրքիր է՝ Քաջարանի կոմբինատը, որպես մեր մարզի խոշոր գործատու, որպես մարզի բնապահպանական վիճակին լրջագույն խնդիրներ հարուցող ընկերություն, որքա՞ն գումար է հատկացնում այդ հիմնադրամին, որն էլ, բնականաբար, պիտի ուղղվի մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը:

– Եթե չեմ սխալվում՝ այդ հիմնադրամը 2016 թվականին է ստեղծվել: Ճիշտն ասած՝ մեկ ամիս առաջ ընկերության ղեկավարությանը նամակ եմ գրել այդ խնդիրների շուրջ, ոչ մի արձագանք... Հիմնադրամի վերջին նիստին կոմբինատի տնօրենի տեղակալը եկել էր, ազգությամբ գերմանացի, խոսք եղավ այդ ամենի մասին: Պիտի որ վերաբերմունքը փոխեն, քանի որ այս պահի դրությամբ՝ Արցախյան պատերազմով պայմանավորված՝ Սյունիքում կա յոթ հազար փախստական՝ Արցախից բռնագաղթված, մոտ 4-5 հազար մարդ առողջության հետ կապված խնդիրներ ունեն. նրանք դիմում են մարզպետարան, եւ այդ թիվն աճման միտում ունի: Եթե կոմբինատը չի օգնելու, բնապահպանական խնդիրներ առաջացնելով, ապա դա ոչ նորմալ երեւույթ պիտի համարվի: Կոմբինատը պարտավոր է առնվազն նեցուկ լինել (գոնե) ազդակիր համայնքների բնակիչներին:

Մաքսիմ Անուշավանիչը մեծ սյունեցի էր՝ Սյունիքի հանդեպ մեծ սիրով տոգորված, նրա բարեգործության սահմաններն ընդգրկում էր ողջ հանրապետությունը: Խոնարհվում եմ նրա հիշատակի առջեւ: Նա հստակ գիտեր սյունեցու ցավը, մարզի ամեն մի բնակավայրի խնդիրները: Ցավոք սրտի, հիմա նման ըմբռնում եւ սրտացավություն չկա:

– Մի խնդրի մասին կուզենայինք ավելի մանրամասն տեղեկություն ստանալ . ի՞նչ է կատարվում Շուռնուխում:

– Չէի ցանկանա, որ գյուղի ներքին հատվածում՝ ճանապարհից ներքեւ ընկած 11 տունն անցներ հակառակորդին: Մեկ ամիս տարբեր փաստաթղթեր էինք հավաքում՝ ձեռքի տակ ծանրակշիռ հիմնավորումներ ունենալու եւ բանակին, ազգային անվտանգության ծառայությանը, ռուսական կողմին ներկայացնելու համար: Դրանք հասել են մինչեւ Մոսկվա: Նույնիսկ ցանկացել ենք տարածքային փոխանակում, չեն համաձայնվել: Հնարավոր ամեն ինչն արվել է, որ մարդիկ չկորցնեն բնակարանները: Իսկ հիմա, երբ մարդիկ տնանկ են դարձել, կառավարությունն ամեն ինչ անում է, որ նրանք դրսում չմնան եւ չեն մնացել: Ես էլ հետաքրքրվել եմ, թե ի՞նչ է անհրաժեշտ, պատասխանել են՝ երկու տնակ: Երեք սեյականոց երկու տնակ ենք հայթայթել: Խմելու ջրի խողովակի, նաեւ անասնագոմի հարց ենք լուծել: 12 տան շինարարության նախագծային աշխատանքներն ավարտվել են, այժմ հողային աշխատանքներ են կատարվում...

– Այլընտրանքային ճանապարհներ ունենալու խնդիրը. այս ուղղությամբ կոնկրետ ի՞նչ քայլեր են արվում, որովհետեւ գարուն է արդեն, եւ կարելի է հողային աշխատանքներ սկսել, մինչդեռ...

– Տաթեւ-Աղվանի այլընտրանքային ճանապարհի հիմնանորոգման առաջարկություն ենք ներկայացրել կառավարություն, դեպի Ծավ տանող այլընտրանքային հողածածկ ճանապարհը վերակառուցելու համար՝ նույնպես, Ագարակ-Եղվարդ տանող ճանապարհը եւս մեր տեսադաշտում է, Խոտ-Որոտան ճանապարհի վերաբերյալ եւս առաջարկություն է ներկայացվել: Կարծում եմ՝ տարեվերջին խնդրահարույց ճանապարհների առումով այլ պատկեր կունենանք:

Կարծեք գործնական փուլ է մտնում Հյուսիս-հարավ մայրուղու Քաջարան-Ագարակ հատվածի կառուցման ծրագիրը:

Օրերս հյուրընկալել էինք Հայաստանում Իրանի դեսպանին եւ այդ հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալին. նրանց էլ հետաքրքրում է մեր ճանապարհների վիճակը:

– Շատ ցավոտ մի հարց. Սյունիքի մարզում քանի՞ զոհված ու անհետ կորած ունենք:

– Այս պահի դրությամբ՝ 210-ը հուղարկավորվել են, 23 հոգի անհետ կորած են համարվում: Ձգտում ենք հնարավորինս նեցուկ լինել նրանց ընտանիքներին... Մարզպետարանի աշխատակազմը պատրաստում է փաստաթղթեր՝ զոհված զինծառայողների կյանքին հասցված վնասի փոխահատուցման հարցերով, նաեւ արցախցի 9 զոհված զինծառայողի փոխհատուցման հարցով, որոնք հուղարկավորված են Սյունիքում:

– Ի՞նչ կարեւոր հարց դուրս մնաց մեր զրույցից:

– Ուզում եմ դիմել բոլոր սյունեցիներին:

Պատիվ ունեմ՝ ձեզանից յուրաքանչյուրին ընդունելու, լսելու եւ նպաստելու ձեր ու մեր ամեն մի ծրագիր կյանքի կոչելուն: Ովքեր կցանկանան Սյունիքի համար մի լավ բան կատարել, հազար անգամ օգտակար կլինեմ ու գլուխ կխոնարհեմ:

Ուզում եմ լինել այն կապակցող շաղախը, որը Սյունյաց միջավայրը կդարձնի բարերար ու կենսունակ՝ հուսահատության թմբիրից հանելով իմ հայրենակիցներին՝ հույսի դռները բացելով դեպի ապագա:

Անամոթ ցավ եմ ապրում հայրենիքի պաշտպանության գործում իրենց հերոսական սխրագործություններով անմահացած մեր բոլոր հերոսների համար, խոնարհվում առյուծասիրտ տղաներ ծնած որդեկորույս մայրերի և հարազատների առաջ:

Այսօր կարիք ունենք շրջադարձային որոշումների: Լուծումները պետք է լինեն ազգային համաձայնության շրջանակում: Պետք է կարողանանք վերականգնել հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի մթնոլորտը, ի մի բերել մեր ժողովրդի բոլոր դրական ու կենսական որակները և դրանք վերածել հավաքական ուժի, որը կլինի մեր հետագա հաջողությունների գրավականը:

Իմ հայրենակիցներ, այո, այսօր, քան երբեւէ՝ մենք շատ տխուր ենք, սակայն կոչ եմ անում այն հայրենասերներին, ովքեր կարող են կոտրել մեր մեջ այդ տխրությունը, կանգնել վիատված մարդկանց կողքին:

Ու երբեք չմոռանանք դարերով ձեւավորված բանաձեւը՝ «Ուժն է ծնում իրավունք»:

ԶՐՈՒՅՑԸ՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ ԵՎ ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԲԱԴԱԼՅԱՆԻ

Հայկական տարածքների խնդիրը 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերում.

հայացք 100 տարի անց

Սկիզբը՝ էջ 1

Հայաստանի դեմ: Պատահական չէ, որ շուտով՝ սեպտեմբերի 1-7-ը Բաքվում կոմինտեռնի նախաձեռնությամբ հրավիրված «Արևելքի ժողովուրդների համագումարում» ավելի ընդգծվեց քեմալականների ու բոլշևիկների գործակցությունը և այդ համագործակցության հակահայկական ուղղվածությունը: Համագումարին ներկա էր նաև հայ ժողովրդի ոխերիմ թշնամի Էնվեր փաշան: Արևելքի մուսուլման ժողովուրդներին կոչ արվեց դուրս գալու «սրբազան պատերազմի»՝ ընդդեմ անհավատների, սոցիալիստական հեղափոխություն իրականացնելու համար: Ուշագրավ է, որ համագումարում Ադրբեջանը, որն արդեն խորհրդային էր, համարվում էր միջազգային պրոլետարիատի միջնաբերդ, իսկ Հայաստանի Հանրապետությունը՝ իմպերիալիզմի որջ: Վերջինիս ջախջախելու և այնտեղ խորհրդային կարգեր հաստատելու համար նախատեսվում էր օգտագործել քեմալական թուրքերի ռազմական ուժերը: Այս հակահայկական համագումարից մի քանի օր անց, խորհրդային կառավարության թողտվությամբ և աջակցությամբ, քեմալականները ներխուժեցին Հայաստանի Հանրապետության տարածքը: Ցավալի է, որ Բաքվի այդ համագումարում ներկա գտնվող հայ բոլշևիկների մի մասը ևս հավանություն տվեց թուրքերի միջոցով հանրապետությունը տապալելու և բռնությամբ խորհրդայնացնելու ծրագրին:

1920թ. սեպտեմբերի 23-ին քեմալական բանակը Քյազիմ Կարաբեքիրի հրամանատարությամբ հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա:

Հայաստանի կառավարությունը օրենք ընդունեց ամբողջ երկրում ռազմական դրություն հայտարարելու մասին: Կատարվեց զինակոչ: Խստագույն պատիժներ սահմանվեցին դասալիքների, դավաճանների նկատմամբ, ստեղծվեց «Հայրենիքի փրկության կոմիտե»: Բացի կոմունիստներից, բոլոր քաղաքական կուսակցությունները հանդես եկան հայրենիքի պաշտպանության կոչով: Հայ բոլշևիկները պատերազմական վիճակը նպաստավոր էին համարում Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու համար: Ցավոք, նրանց մի մասը նույնիսկ կոչ էր անում չդիմադրել թուրքերին՝ որպես ռուսների դաշնակիցների և հայ ժողովրդի ազատարարների: Դժբախտաբար, այս քարոզչությունը վատ ազդեցություն թողեց ռազմիկների մարտունակության վրա:

Թշնամին արագորեն հասավ Սարիղամիշին և սեպտեմբերի 29-ին առանց դժվարության գրավեց այն: Նույն օրը թուրքերը գրավեցին նաև Կաղզվանը:

Հոկտեմբերի 29-ին թշնամին մոտեցավ Կարսին: Այդ օրհասական օրերին Հայաստանի կառավարության դիմումները Անտանտի երկրների ներկայացուցիչներին օգնության մասին, մնացին անպատասխան: Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունները, Ազգերի լիգան ոչ մի ջանք չգործադրեցին թուրքերի ու Խորհրդային Ռուսաստանի դեմ միայնակ հայտնված Հայաստանը փրկելու ուղղությամբ: Զարմանալիորեն բավական արագությամբ հայկական բանակը բարոյալքվեց, սկսվեց զանգվածային դասալքություն: Պատահական չէ, որ հոկտեմբերի 30-ին, առանց լուրջ դիմադրության, թշնամուն հանձնվեց ռազմավարական մեծ կարևորություն ներկայացնող Կարսի բերդը: Շուրջ 3 հազ. հայ զինվորներ գերի ընկան, այդ թվում՝ 120 սպա, գեներալներ Դ.Բեկ-Փիրումյանը, Ք.Արարատյանը և ուրիշներ: Օգտվելով հայերի ծանր վիճակից՝ վրացիները, որոնց հետ համաձայնեցված էր քեմալական հարձակումը, գրավեցին Արդահանը: Նույն ժամանակ կարմիր բանակը ռազմակալած էր պահում Ղարաբաղը, Զանգեզուրը:

Կարսի անկումից հետո թուրքերը արագորեն հասան Ալեքսանդրապոլի մատույցներին և նոյեմբերի 5-ին կնքված զինադադարով, մտան քաղաք: Ուշագրավ է, որ նրանք այնտեղ նոյեմբերի 6-ին տեղի որոշ հայ բոլշևիկների աջակցությամբ գավառում «հայտարարեցին» խորհրդային իշխանություն, իսկ նոյեմբերի 7-ին՝ Հոկտեմբերյան հեղափոխության 3-րդ տարեդարձի օրը, կազմակերպեցին շքերթ: Վրացիները չհապաղեցին այժմ էլ պահանջել Լոռին: Նոյեմբերի 13-ին Հայաստանի հետ ձեռք բերած համաձայնությամբ՝ նրանք բռնազավթեցին Լոռու Չեզոք գոտին: Նոյեմբերի 18-ին հայկական կողմը հարկադրված ընդունեց թուրքերի առաջարկած զինադադարը և ռազմական գործողությունները դադարեցին: Հայտնվելով դիվանագիտական և ռազմական մեկուսացման մեջ՝ Հայաստանը պարտություն կրեց:

1920 թ. նոյեմբերի 29-ին հայհեղկոմը 11-րդ բանակի օգնությամբ Ադրբեջանից մտավ Իջևան և հայտարարեց երկրում խորհրդային իշխանություն: Դեկտեմբերի 2-ին Երևանում դաշնակցությունը խաղաղ ճանապարհով իշխանությունը հանձնեց: Նույն օրը՝ դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքվեց հայ-թուրքական պայմանագիր, որով պատերազմն ավարտվում էր:

Ալեքսանդրապոլի հաշտությամբ հայ-թուրքական սահմանագիծն անցնելու էր Ախուրյան-Արաքս գծով (ինչպես այսօր), երբեք Թուրքիայի կազմում չեղած Սուրմալուի գավառն անցնում էր Թուրքիային, Նախիջևանում մտցվելու էր հատուկ կառավարում՝ թուրքերի հսկողությամբ: Հայաստանը հրաժարվում էր Սևրի պայմանագրից, ունենալու էր միայն 1500 հոգանոց զորք: Չնայած Շիրակը մնալու էր Հայաստանին, սակայն թուրքերը դեռ չշտապեցին այնտեղից դուրս գալ:

Այսպես, քեմալաբոլշևիկյան գործակցության արդյունքում կործանվեց Հայաստանի առաջին հանրապետությունը:

Հայաստանի խորհրդայնացումը: 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո 11-րդ կարմիր բանակը մտավ Ղարաբաղ, Զանգեզուր և Նախիջևան: Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ քեմալականներն ամրապնդեցին իրենց բանակը և բոլշևիկների համաձայնությամբ 1920 թ. սեպտեմբերին ներխուժեցին Հայաստան: Հայ բոլշևիկները չհապաղեցին օգտվել երկրի համար ստեղծված ծանր իրավիճակից՝ այնտեղ խորհրդային կարգեր հաստատելու համար: 1920 թ. նոյեմբերի կեսերին Բաքվում Հայաստանի կոմկուսի անդամներից կազմվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե՝ Սարգիս Կասյանի նախագահությամբ: Այն ժամանեց Ղազախ՝ այնտեղից Քարվանսարա (Իջևան) անցնելու և Հայաստանում խորհրդային իշխանության համար պայքար ծավալելու նպատակով:

Մայիսին Մոսկվայում ընդհատված հայ-ռուսական բանակցությունները վերսկսվեցին միայն հոկտեմբերին: Խորհրդային կառավարությունը Երևան ուղարկեց Բ. Լեգրանի պատվիրակությանը, որին հանձնարարված էր հասնել խաղաղ ճանապարհով Հայաստանի խորհրդայնացմանը և նրա տարածքով դեպի Թուրքիա զինամթերք տեղափոխելուն: Հայաստանն էլ ձգտում էր Ռուսաստանի կողմից իր ճանաչմանը և ռուսների միջոցով թուրքական ագրեսիայի դադարեցմանը: Հոկտեմբերի 28-ին Թիֆլիսում Լեգրանը առաջարկեց Հայաստանին թույլատրել ռազմամթերք տեղափոխելու Թուրքիա հայկական երկաթուղով՝ փոխարենը խոստանալով Զանգեզուրի և Նախիջևանի միացումը Հայաստանին: Հոկտեմբերի 28-ին կնքվեց հայ-ռուսական համաձայնագիր վերոհիշյալ պայմաններով: Սակայն շուտով Ադրբեջանը խիստ դժգոհություն հայտնեց Զանգեզուրի և Նախիջևանի կապակցությամբ և ջանք չխնայեց հայ-ռուսական հարաբերությունները վատթարացնելու համար: Դրանից հետո Երևանում Լեգրանի հետ բանակցություններն ընթացան ավելի դժվարին պայմաններում: Չմոռանանք, որ մյուս կողմից Ռուսաստանի վրա ճնշում էր բանեցնում նրա դաշնակից Թուրքիան՝ չհանդուրժելով հայ-ռուսական մերձեցումը:

Շարունակությունը՝ էջ 4



Հայկական տարածքների խնդիրը 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերում.

հայացք 100 տարի անց

Սկիզբը՝ էջ 3

1920 թ. նոյեմբերի 19-ին Բ. Լեգրանին ընդունեցին ՀՀ վարչապետ Հ.Օհանջանյանը և զինվորական նախարար Ռ.Տեր-Մինասյանը, որտեղ ռուսական կողմը ուղղակիորեն դրեց Հայաստանը ռուսական բանակի միջոցով խորհրդայնացնելու պահանջը: Հայկական կողմը այդ պահանջն ընդունեց պայմանով, որ Ռուսաստանը երաշխավորի ապագա Խորհրդային Հայաստանի սահմանները 1914 թ. վիճակով, այսինքն՝ Կարսի մարզի հետ միասին: Բացի այդ քայլից, դաշնակցությունը երկիրը փրկելու մեկ այլ քայլ կատարեց. նոյեմբերի 23-24-ին Օհանջանյանի կառավարությունը հրաժարական տվեց: Կազմվեց նոր կառավարություն ձախ-դաշնակցականներից և էսեռներից: Վարչապետի պաշտոնը տրվեց Սիմոն Վրացյանին, որի կաբինետին վիճակված էր կառավարելու ընդամենը 10 օր:

Վրացյանի կառավարությունը նոյեմբերի 24-ին Խատիսյանի ղեկավարությամբ Ալեքսանդրապոլ ուղարկեց պատվիրակություն՝ թուրքերի հետ հաշտություն կնքելու համար:

Նոյեմբերի 29-ին հայհեղկոմը 11-րդ կարմիր բանակի զորամասերի ուղեկցությամբ Ղազախից մտավ Քարվանսարա և այնտեղ շինծու բանվորագյուղացիական ապստամբության անունից, Հայաստանում հայտարարեց օրինական իշխանության տապալման և խորհրդային իշխանության հաստատման մասին: Հեղկոմի հրապարակած հատուկ դեկլարացիայով Հայաստանը հռչակվում էր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Հայկական բանակը դիմադրություն ցույց չտվեց: Դա ոչ թե խորհրդային իշխանության նկատմամբ հավատի արդյունք էր, այլ ռուսական կողմնորոշման: Շատերը իրավամբ երկիրը փրկելու միակ միջոցը տեսնում էին Ռուսաստանին միանալու մեջ:

Ստանալով Քարվանսարայում հեղկոմի ընդունած հայտարարության լուրը՝ Լեգրանը դեկտեմբերի 1-ին վարչապետ Վրացյանին առաջարկեց հրաժարական տալ հօգուտ հեղկոմի: Նույն օրը դաշնակցության բյուրոն, պառլամենտի դաշնակցական խմբակցությունը, որոշեցին ընդունել «կարմիրների առաջարկը խորհրդայնացման մասին»:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվեց համաձայնություն Ռուսաստանի ներկայացուցիչ Բ.Լեգրանի և Հայաստանի կառավարության լիազորներ Դրոյի և Հ. Տերտերյանի ստորագրությամբ: Համաձայնագիրը բաղկացած էր 8 կետից և պարունակում էր շատ կարևոր կետեր: Առաջին կետով Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրաժարվում է իշխանությունից և այն ժամանակավորապես, մինչև հեղկոմի ժամանումը Երևան, հանձնում կարմիր բանակի հրամանատարությանը՝ Դրոյի և Ռուսաստանի կոմիսար Սիլինի ղեկավարությամբ: Հեղկոմի կազմի մեջ պետք է մտնեին 5 բոլշևիկներ և 2 դաշնակցականներ (Դրոն և Վրացյանը, ընդ որում՝ Դրոն ստանձնելու էր բանակի հրամանատարությունը): Հաջորդ կետերով Ռուսաստանը և հայհեղկոմը պարտավորվում էին բռնություններ չգործադրել նախկին կառավարության անդամների ու նրա համակիրների, դաշնակցականների նկատմամբ: Երևանի համաձայնագրով Խորհրդային կառավարությունը պարտավորվում էր մտնել բանակցությունների մեջ Թուրքիայի հետ և սահմանների հարցում պաշտպանել Հայաստանին :

Այսպես, խորհրդա-քեմալական համագործակցության հետևանքով 1920 թ. դեկտեմբերի 2-ին կործանվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, որը գոյություն ուներ 1918 թ. մայիսի 28-ից: Դաշնակցությունը խոհեմ գտնվեց և իշխանությունը հանձնեց անարյուն: Թեև ընկավ հանրապետությունը, սակայն նրա գոյությունը անհետևանք չմնաց: Նրա հիմքի վրա բոլշևիկները պարտավորված ստեղծեցին նոր հանրապետություն՝ Խորհրդային Հայաստանը, որի 70-ամյա պատմության ընթացքում հայ ժողովուրդն ապրեց տնտեսական ու մշակութային խոշոր առաջընթաց:

Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Ադրբեջանին: Շնորհիվ Խորհրդային Ռուսաստանի հետ ռազմական համագործակցության, քեմալականները զգալիորեն ամրապնդեցին իրենց դիրքերը և հսկողություն սահմանեցին Թուրքիայի մի զգալի հատվածի վրա: 1921 թ. փետրվար-մարտին, երբ Հայաստանում բռնկվել էր ժողովրդական ապստամբություն բոլշևիկների դեմ, նրանք Մոսկվայում բանակցություններ սկսեցին խորհրդային ղեկավարության հետ: Խորհրդային Հայաստանից կոնֆերանսին ուղարկվեց Ալ. Բեկզադյանի պատվիրակությունը: Սակայն թուրքական կողմը շատ խորամանկորեն օգտագործեց այն հանգամանքը, որ փետրվարի 18-ին Երևանում տապալվել է հեղկոմը, ուստի նրա ներկայացուցիչ Բեկզադյանը լիազորված չէ ներկայացնելու Հայաստանի շահերը: Արդյունքում ստացվեց այնպես, որ Բեկզադյանին արգելեցին մտնել կոնֆերանսի դահլիճ: Այսպես 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքվեց խորհրդաթուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը: Այն կնքվեց առանց հայ ժողովրդի կենսական շահերը հաշվի առնելու և առանց հայերի մասնակցության: Պայմանագիրն իր սուր ծայրով ուղղված էր Հայաստանի դեմ: Այս ամոթալի պայմանագրի կնքման գործում իրենց մասնակցությունն ունեցան խորհրդային Ադրբեջանի ղեկավարները և ազգությունների ժողկոմ Ի.Ստալինը: Պատահական չէ, որ թուրքական պատվիրակությունը Մոսկվա գալու ճանապարհին մի քանի օր հանգրվանել էր Բաքվում և կնքվելիք պայմանագրի տեքստը համաձայնեցրել ադրբեջանցիների հետ: Ինչ վերաբերում է Ստալինին, որը հայտնի էր իր հակահայկական կեցվածքով, ջանք չխնայեց, որպեսզի Ռուսաստանի արտգործնախարար Չիչերինը հրաժարվի իր հայամետ դիրքորոշումից և կոնֆերանսում մեծ զիջումներ կատարի թուրքերին: Իզուր չէ, որ վերջինիս տեղակալ, հայազգի Լևոն Կարախանը չմտցվեց խորհրդային պատվիրակության կազմի մեջ: Փաստորեն Մոսկվայի կոնֆերանսում հաղթանակեց Ստալինի այն թեզը, թե հանուն համաշխարհային հեղափոխության «հայ ժողովուրդը պետք է հրաժարվի ոչ միայն դաշնակցականների մեծ Հայաստանի գաղափարից, այլև հայկական համարվող հողերի միավորման համեստ ցանկությունից»: Ավելին, կոնֆերանսի նախօրյակին, ընդունելով թուրքական պատվիրակությանը, Ստալինն ասել էր, թե հարկ չկա անհանգստանալու կոնֆերանսում հայկական հարցի խնդրով, քանի որ «Դուք այն լուծել եք: Եթե դեռևս մնացել են չլուծված հարցեր՝ վճռեք մինչև վերջ»:

Մարտի 16-ի պայմանագրով Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի ամբողջականությունը և նրա իրավունքները նաև Կարսի մարզի նկատմամբ: Թուրք-հայկական սահմանագիծն անցնելու էր Ախուրյան-Արաքս գծով: Ռուսաստանը ստանում էր Բաթում նավահանգիստը՝ փոխարենը Թուրքիային զիջելով երբեք նրա կազմում չեղած հայկական Սուրմալուի գավառը: Քեմալականները պարտավորվում էին ազատել Ալեքսանդրապոլի գավառը: Նախիջևանի մարզը դառնում էր ինքնավար տարածք Ադրբեջանի խնամակալությամբ, պայմանով, որ այդ իրավունքը նա մեկ այլ երրորդ պետության զիջել չէր կարող (հոդված 3): Պարզ է, որ խոսքը գնում էր Հայաստանին չզիջելու մասին: Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի միացյալ հանձնաժողովը կատարելու էր շտկում Նախիջևանի և Հայաստանի սահմանի մի հատվածում: Թուրքիան պարտավոր էր ազատել նաև Ալեքսանդրապոլ-Նախիջևան երկաթգիծը: Խորհրդային Ռուսաստանը պայմանագրով պարտավորվում էր նաև ջանքեր գործադրել նմանօրինակ պայմանագիր Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև կնքելու համար:

Մոսկվայի կոնֆերանսից հետո Ալ. Բեկզադյանը բողոք ներկայացրեց խորհրդային կառավարությանը իր պատվիրակությանը մասնակցությունից զրկելու և հակահայկական պայմանագիր ստորագրելու համար: Սակայն այդ բողոքը ոչ մի գործնական նշանակություն չունեցավ: Պայմանագրի ստորագրումից հետո էլ թուրքերը չշտապեցին հեռանալ Ալեքսանդրապոլի գավառից, որը մնալու էր Հայաստանին: Այն ազատվեց միայն ապրիլի 22-ին՝ այնտեղ իրականացված կոտորածներից ու թալանից հետո: Խորհրդային Ռուսաստանը օգտագործեց Հայաստանի թուլությունը՝ նրան ևս այս պայմանագիրը պարտադրելու համար:

1921 թ. մայիսի 7-ին Բաքվում հավաքվեցին անդրկովկասյան խորհրդային երեք հանրապետությունների պատվիրակությունները՝ Թուրքիայի հետ Մոսկվայի պայմանագրից բխող պայմանագրեր կնքելու համար: Մշակվեց ընդհանուր մոտեցում, որի համաձայն Թուրքիայի հետ բանակցություններում երեք հանրապետությունները պետք է հանդես գային միասնաբար: Նախատեսվում էր հիմնականում պահպանելով Մոսկվայի պայմանագրի կետերը, որոշ ճշտումներ մտցնել, որոնք բխում էին Հայաստանի շահերից. հասնել Սուրմալուի գավառի Կողբի աղահանքերից Հայաստանի օգտվելու իրավունքի շնորհմանը: Հայաստանը ձգտում էր նաև ձեռք բերել Նախիջևանի նկատմամբ հովանավորության իրավունքը և այլն:

Անդրկովկասյան երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև կոնֆերանսը հրավիրվեց 1921 թ. սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 13-ը: Հայկական պատվիրակության կազմում էին Ասքանազ Մռավյանը (նախագահ) և Պողոս Մակինցյանը: Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր Քյազիմ Կարաբեքիրը, որը թուրք-հայկական պատերազմի ժամանակ աչքի էր ընկել իր հակահայկական դիմագծով: Խորհրդային Ռուսաստանը ներկայացնում էր Յակով Գանեցկին: Հայկական պատվիրակությունը փորձեց հօգուտ Հայաստանի որոշ ճշտումներ մտցնել Մոսկվայի պայմանագրի մեջ: Մռավյանը թուրքական կողմին առաջարկեց Հայաստանին հանձնել Ախուրյանի աջ ափին մնացող պատմական Անի մայրաքաղաքի ավերակների շրջանը, իրավունք շնորհել Սուրմալուի գավառի Կողբի աղահանքերից օգտվելու համար, վերադարձնել Ալեքսանդրապոլի դեպոյից թուրքերի բռնագրաված գույքը:

Քյազիմ Կարաբեքիրը շողոքորթ ելույթ ունեցավ՝ ասելով, թե Թուրքիան չի խուսափում հօգուտ «եղբայրական» հայ ժողովրդի զիջելու վերոհիշյալ շրջանները: Սակայն ինքը լիազորված չէ Մոսկվայի պայմանագրով նախատեսված սահմանագծում փոփոխություններ կատարել: Պայմանագրի կնքումից հետո նա այդ մասին տեղյակ կպահի իր կառավարությանը և հուսով է, որ մերժում չի ստանա: Պայմանագիրը ստորագրվեց հոկտեմբերի 13-ին՝ Մոսկվայի պայմանագրի կետերի համեմատությամբ առանց որևէ էական փոփոխության: Ուշագրավ է, որ Թուրքիան և Ադրբեջանը նորից գործում էին միասնաբար, մանավանդ, եթե խոսքը գնում էր Հայաստանի օգտին որևէ փոփոխության: Պատահական չէ, որ Կարս էին ժամանել նաև Վեդիի թուրքերը, որոնք ձգտում էին հասնել իրենց շրջանը Նախիջևանին միացնելուն: Սակայն Հայաստանի և Ռուսաստանի ներկայացուցիչները մերժեցին այդ պահանջը:

Այսպես, Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերով ունեցավ տարածքային լուրջ կորուստներ: Ցավալիորեն, ճիշտ հարյուր տարի անց՝ 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբերին Հայաստանի Հանարապետությունն ու Արցախը ենթարկվեցին թուրք-ադրբեջանական նոր ագրեսիայի, որի արդյունքում բռնազավթեցին Արցախի Հանրապետության տարածքի մեծագույն մասը:

//

Ակնաբուժական նոր կլինիկա Կապանում՝ «ԱՆՍԻ ՕՊՏԻՄԵԴ»

Կապանի ԲԿ-ից դուրս եմ եկել, դեղատուն եմ փնտրում: Անցնում եմ կամրջակն ու նոր բացված ակնաբուժական կլինիկան եմ տեսնում՝ «ԱՆՍԻ ՕՊՏԻՄԵԴ» : Զարմանքից ու շփոթմունքից մտածածս բարձաձայնում եմ՝ «Նոր կլինիկա՞ է բացվել»: Շենքի շքամուտքի մոտ երկու կին էին կանգնած, ովքեր լսելով հարց-մտորումս՝ միաբերան պատասխանում են.

– Իհարկե, մեր քաղաքը զարգանում է, միայն Երեւանում էիք սովոր սենց բաներ տեսնել...

Հետաքրքրասիրությունս հաղթում է՝ ներս եմ մտնում:

Ինձ դիմավորում են գեղեցկատես բժշկուհին ու բուժքույրը:

– Նո՞ր եք բացել, շնորհավորում եմ:

– *Այս տարվա հունվարից, գաղափարը վաղուց ունեինք, միայն տեղի հարցում տատանվում էինք, պատերազմից հետո, երբ ստեղծվեց այս իրավիճակը, առանց հապաղելու որոշեցինք՝ Կապանում, քանի որ Գորիսից այս կողմ մի քիչ շարժը դժվարացել է, բացի այդ՝ գոնե ես Կապանում այսպիսի հաստատություն չեմ նկատել,* – ասաց բժշկուհի Սիրանույշ Կարապետյանը:

Հետո առաջարկում են իրենց օգնությունը, հրաժարվում եմ, ասում՝ կցանկանայի ուրախությունս ընթերցողների հետ կիսել, խնդրում եմ մանրամասն ներկայացնել , թե ինչ են առաջարկում մեզ, ինչ մասնագիտական թիմ է աշխատում եւ այլն.

– Մեծ թիմով չենք աշխատում, ես ԵՊԲՀ-ն եմ ավարտել, մասնագիտությամբ ակնաբույժ եմ, մի գործընկեր ունենք, նա հիմնականում մայրաքաղաքում է լինում: Մեր հաճախորդներին առաջարկում ենք՝

- *տեսողության սրության ստուգում,*
- *աչքի առաջնային հատվածի հետազոտություն,*
- *ակնահատակի զննում,*
- *աստիգմատիզմի, կարճատեսության, հեռատեսության որոշում, բուժում,*
- *ներակնային ճնշման չափում,*
- *օտար մարմնի հեռացում:*

Այնուհետեւ հավելեց.

«Հնարավոր է, որ առաջին այցելությունը բավարար լինի, բայց եթե լուրջ խնդիրներ եմ տեսնում, ապա վերցնում եմ մշտական հսկողության: Կատարում եմ թե բուժման նշանակումը, թե վարում եմ հետագա ընթացքը: Ակնոցների նշանակումն այստեղ ենք կատարում, բայց ապակիները Երեւանում են պատրաստվում: Նոր սերնդի սարքավորումներով ենք աշխատում՝ ավտոռեֆրակտոմետր-կերատոմետր, անհատական հետազոտության սարք եւ այլն: Մատչելիության առումով՝ կարող եմ ասել, որ գրեթե պետական բժշկական ծառայությունների արժեքն ենք առաջարկում: Բայց գեղչեր ունենք, մեծ սիրով ու մեծ գեղչերով կդիմավորենք պատերազմի ընթացքում զոհված մեր հերոսների հարազատներին»:

Մեր զրույցն ընդհատում են այցելուները. երիտասարդ զույգ է՝ մոտ վեց տարեկան երեխայի հետ:

– Երեխաների՞ն էլ եք սպասարկում:

Բժշկուհու փոխարեն այցելու մայրիկն է պատասխանում.

– Մեզ համար փրկություն է, երեխաս դժվարությամբ է հիվանդանոց գնում, բայց բժշկուհի Կարապետյանի մոտ հաճույքով է գալիս, որովհետեւ նա երեխաների հետ վարվել գիտի, շատ ջերմ է ընդունում, հոգատար է եւ ամենակարեւորը՝ լավ մասնագետ:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԲԱԴԱԼՅԱՆ

Ծնունդդ շնորհավոր, հարգելի Ռաֆիկ Հարությունյան

Կապանի տարածաշրջանի վետերանների խորհրդի նախագահ Ռաֆիկ Հարությունյանը դարձավ 90 տարեկան, անձնավորություն, ում գիտակցական կյանքն անցել է մի ոլորտում՝ մանկավարժություն, այն է՝ դեռահասների ֆիզիկական դաստիարակությունը:



Ծնվել է Կապանի շրջանի Նորաշենիկ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է գյուղի տարրական դպրոցում: Ստալինյան բռնաճնշումները չշրջանցեցին Հարությունյանների ընտանիքը: Հորը, որպես ՀՅԴ կուսակցության անդամ, աքսորեցին Սիբիր: Նոր էր ավարտել երրորդ դասարանը, երբ սկսվեց Մեծ հայրենականը: Եղբայրները զորակոչվեցին գործող բանակ: Ընտանիքի հոգսը ծանրացավ Ռաֆիկի եւ մոր փխրուն ուսերին: 1941-ի հուլիսին նրան հրամանագրեցին Նորաշենիկի կոլվարչության անդամ: 11 տարեկան անփորձ երեխան գյուղի այծերը, կովերը, եզներն էր արածեցնում, գյուղատնտեսական տարբեր աշխատանքներ կատարում: Ծանր, իր ուժերից վեր աշխատանքներ էր կատարում, որովհետեւ մորն անընդհատ սպառնում էին, որ եթե նախատեսված աշխօրի նվազագույնը չկատարի, նրան էլ են աքսորելու: Սակայն մոր հոգատարության շնորհիվ որդին դպրոցը չթողեց, ծանր աշխատանքը համատեղում էր ուսման հետ:

Պատերազմն ավարտվեց, ամեն ինչ իր տեղն ընկավ: Առաջին բերկրանքը Ռաֆիկն ապրեց, երբ 1946-ին նրան պարգեւատրեցին մեդալով՝ **«За доблестный труд в Великой Отечественной войне 1941-1945 гг.»** 1948-ին կոլվարչության նիստի որոշմամբ՝ որպես ակտիվ կոլտնտեսական եւ 7-րդ դասարանն օրինակելի առաջադիմությամբ ավարտած աշակերտ, գործուղվեց Երեւան՝ գյուղմեխանիզացիայի տեխնիկումում սովորելու: 1951 թ. տեխնիկումի երկրորդ կուրսը չավարտած՝ մեկնեց ժամկետային ծառայության՝ ծառայելու խորհրդային բանակում: 1955-ին զորացրվելուց հետո շարունակեց ուսումը, որը համատեղում էր աշխատանքի հետ Երեւանի էլեկտրալամպերի գործարանում:

Ռաֆիկ Հարությունյանի տարերքը սպորտն էր, շրջապատում նրան առավելապես ճանաչում էին որպես սպորտսմեն, եւ պատահական չէ, որ հրավիրեցին խաղալու այն ժամանակվա «Աշխատանքային ռեզերվներ» կամավոր ընկերության ֆուտբոլային թիմում: Երկու տարի հետո նշանակեցին Կապանի սպորտկոմիտեի նախագահ, հեռակա կարգով ընդունվեց եւ ավարտեց Երեւանի ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտը: Ընդունվեց նաեւ Երեւանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը (հեռակա ուսուցում), բայց ընտանեկան պայմաններից ելնելով՝ թերի թողեց ուսումը: Դարձավ մարզադպրոցի տնտեսական մասի վարիչը, այնուհետեւ՝ տնօրեն, 1970-ին տեղափոխվեց Կապանի թիվ 1 դպրոց, այնուհետեւ՝ թիվ 6 դպրոց. այս մեկի աղջիկների վոլեյբոլի թիմը դարձավ Հայաստանի չեմպիոն:

1991-ին անցավ կենսաթոշակի, սակայն շարունակեց ֆիզկուլտուրա դասավանդել Օխտարի, Շիկահողի, Նորաշենիկի միջնակարգ դպրոցներում (վերջինում նաեւ դպրոցի տնօրեն): Տեղափոխվելով Կապան՝ անցավ հասարակական աշխատանքի՝ հայրենական մեծ պատերազմի եւ աշխատանքի վետերանների խորհրդի նախագահի տեղակալ:

2013-ին ընտրվեց Կապանի տարածաշրջանային վետերանների խորհրդի նախագահ, որի պարտականությունները կատարում է մինչեւ օրս՝ վառ պահելով ոչ միայն Երկրորդ աշխարհամարտում ընկած իր եղբայրների, այլեւ բոլոր զոհվածների հիշատակը:

Ռաֆիկ Հարությունյանն ընտրվել է քաղաքային եւ շրջանային խորհուրդների պատգամավոր, պարգեւատրվել մեդալներով, պատվոգրերով, ժողկրթության գերազանցիկ է, եղել է հանրապետության ֆիզկուլտուրայի եւ սպորտի կոմիտեի եւ նախագահության անդամ, հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիայի անդամ:

«Սյունյաց երկիրը» շնորհավորում է վաստակաշատ մարդուն, նրան մաղթում առողջություն, հաջողություններ հասարակական կյանքում:

Ամենայն բարիք:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Խոսք հիշատակի

Հրանտ Գրիգորյան



Երկրային կյանքին հրաժեշտ է տվել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության «Զանգեզուր» մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ Հրանտ Գրիգորյանը, ում աշխատասիրությունը, գործին նվիրվածությունը ուղեկցել են ողջ գիտակցական կյանքի ընթացքում:

Հրանտ Գրիգորյանը ծնվել է 1940 թվականի նոյեմբերի 20-ին Ղափանի շրջանի Չափնի գյուղում կոլտնտեսականի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի, միջնակարգը՝ Արծվանիկի դպրոցում:

Խորհրդային բանակում ծառայելուց հետո սովորել եւ ավարտել է Երեւանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը ինժեներ-էլեկտրիկի մասնագիտությամբ: Բուհում ստացած գիտելիքները նախ օգտագործեց մանկավարժության ոլորտում՝ դասավանդելով Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումում: Այնուհետեւ նրա կենսագրությունը մինչեւ կյանքի ավարտը կապվում է մի ոլորտի հետ՝ էներգետիկա:

Բուհն ավարտել էր «Էլեկտրական

Շարունակությունը՝ էջ 8

Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց քաջորդիներին

Սենիկ Սաֆյան . ծնվել էր կյանքը հայրենիքին նվիրելու համար

Սենիկ Սերյոժայի Սաֆյանը ծնվել է 1970թ. հունվարի 1-ին Խնձորեսկում, միջնակարգ կրթությունը ստացել է գյուղի դպրոցում, կրթությունը շարունակել՝ Երեւանի անասնաբուժական եւ անասնաբուծական ինստիտուտում:

1992թ. պատերազմին զուգընթաց ձեւավորվում էր ՀՀ բանակը. Սենիկն առաջին զորակոչի զինվորներից էր. դժվար էր, ծանր, բայց հայկական բանակը Սենիկի երազանքն էր, ու բանակի յուրաքանչյուր փոքր հաջողությունը ծածկում էր բոլոր դժվարությունները:

Սենիկը գեղեցիկ, օրինակելի ու երջանիկ ընտանիք ուներ՝ երկու որդի եւ մեկ դուստր, մանկավարժ կինը զբաղվում էր երեխաների կրթությամբ, բայց Սենիկի համար կրթության ու դաստիարակության միակ ճշմարիտ ուղին հայրենասիրությունն էր, բանակը, հողը՝ հայրական զրույցներն ու խորհուրդները միայն այդ գաղափարի շուրջ էին:

Արցախն ազատագրված էր, արյունով վերադարձրածը խելքով ու քրտինքով են պահում. Սենիկն ընտանիքը տեղափոխեց Քաշաթաղ...

Հող էր մշակում, մասնակցում դպրոցի կայացման գործին՝ միայն մեկ համոզմունքով, որը կրկնում էր հեքիաթի փոխարեն՝ երեխաներին բարի գիշեր մաղթելուց առաջ՝ *«Էս հողում պիտի գերեզման ունենանք, որ պատմություն ունենանք, էս հողում պիտի ծառ տնկենք, որ արմատավորվենք, պիտի եկեղեցի կառուցենք, որ հայի հավատով կառչենք հողին..»:*

Հատուկ վերաբերմունք ուներ դեպի զինվորական համազգեստը եւ որդիներին պարտադիր զինվորական ծառայությունից հետո համոզեց ծառայության մտնել՝ ասելով՝ *«Որդիներս այս համազգեստով շատ սիրուն են»:*

Դուստրն այլ մոլորակ էր նրա համար, արքայադուստր, ում ամեն քայլին ուշադիր էր, ում դաստիարակության հիմքում դրեց հայրենիքի արժանապատվությունը պատմությանը գերազանց տիրապետելու միջոցով գիտակցելու գաղափարը: Նաեւ պատմության ուսուցչուհի դարձավ, հայրը նրա բոլոր դասաժամերին «ներկա էր», քանի որ դասի նախաբանը պիտի պլանավորեր հոր խորհրդով՝ *«Մի քանի րոպե նվիրիր մեր ազատագրական շարժումներին ու հերոսներին, թող երեխաների հոգում մշտական տեղ գտնեն Տիգրան Մեծը, Արտավազդը, Վարդանը, Դավիթ Բեկը, Նժդեհը, Անդրանիկը, Վազգենը, Մոնթեն...»:*

2016թ. ապրիլի 2-ին, առանց հապաղելու, մեկնեց Մատաղիս՝ որդու կողքին կռվեց ու հաղթանակած, ոգեւորված տուն վերադարձավ՝ *«Բանակ ունենք՝ աշխարհը չունի, առյուծ տղերք ունենք»:*

2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Երիցվանքում՝ պատերազմի գույժից րոպեներ անց, զորահավաք էր՝ ինքնակամ, չպարտադրված... Սենիկը ջոկատի գլուխն անցավ, քանի որ համոզված էր, որ ի զորու է առաջնորդել ու պահպանել իր կողքին կռվողների կյանքը: *«Չաբրայիլն ինձանից լավ իմացող չկա».* ասաց ու հաղթանակի համոզմունքով գնաց Ջրական: Իր գլխավորած ջոկատը պահպանեց՝ խոստմանն համաձայն, բայց իր կյանքը զոհեց հայոց սուրբ հողին՝ մի վայրկյան անգամ չկասկածելով հաղթանակին:

Դու չես պարտվել, Սենիկ Սաֆյան, քո ընկնելու պահին՝ հոկտեմբերի 3-ին, Ջրականը դեռ հայինն էր, իսկ Երիցվանք թուրքի ոտք չէր մտել...

//

Իսայան Վահրամ. նա պատրաստ էր օգնելու յուրաքանչյուրին

Իսայան Վահրամ Վազգենի. ծնվել է 1980 թվականի մարտի 3-ին Կապանի շրջանի Դավիթ բեկ գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է գյուղի դպրոցում: 1998-2000 թվականներին ծառայել է հայոց բանակում: Ամուսնացած էր՝ ունի 3 երեխա:

2014 թվականին պայմանագրային ծառայության է անցել Կարմրաքարի, ապա՝ Կապանի զորամասում:

2016 թվականի Ապրիլյան ռազմական իրադարձություններից հետո՝ մի քանի ամիս զորամասի կազմում մնացել էր Արցախում. վերադարձել էր հուսավառ՝ *«Մերոնք ուժեղ են, մերոնց հաղթող չկա...»:*

2018 թվականից Վահրամը ծառայում էր Որոտանում (Կուբաթլու): Ամուսինները միասին էին աշխատում նույն զորամասում: Կինն արցունքախեղդ ձայնով է խոսում ամուսնու մասին, *«Վահրամը շատ ծանր էր տանում. ամեն օր վիրավորներ ու դիակներ էր իջեցնում, նույնիսկ հաց չէր կարողանում ուտել, քանի որ վատ էր զգում այդ անվերջանալի վշտից»:*

Ընկերները նրա մասին ափսոսանքով են պատմում՝ *«Մեքենան, որ ինքն էր վարում, այնքան անսարք էր, որ կարող էր չքշել, իր զոհվելու օրն էլ նահանջի հրաման կար, բայց Վահրամն ընդդիմացավ՝ չենթարկվեց հրամանին, գնաց, որ մերոնց դիակները չմնան, գնաց ու զոհվեց»:*

Համագյուղացիների հետ եմ զրուցում, նրանք Վահրամի մասին միայն լավն են հիշում, բայց չեն կարողանում դրվագներ մեջբերել, քանի որ ամիսներ անց էլ չեն հաշտվում իրենց բարի, կամեցող, բոլորին ամենուր եւ ամեն ժամ օգնող (իրենց բնութագրմամբ) ընկերոջ զոհվելու փաստի հետ:

2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան Վահրամը, ով Որոտանի զորամասում բուժկետի վարորդ էր, նախ՝ Գորիս է տեղափոխում զինծառայողների կանանց ու երեխաներին, ապա՝ վերադառնում զորամաս: Եվ սկսվում է մղձավանջը... Թանկ էր ամեն րոպեն, Վահրամի մեքենան ոչ մի անգամ կանգ չառավ՝ բուժանձնակազմին տանում էր առաջնագիծ, ինքը մի քանի րոպեում մարմիններն էր իջեցնում, վիրավորներին տեղափոխում...

Երբ հրետակոծությունը սաստկանում էր, դիրքեր բարձրանալն անհնարին էր դառնում, Վահրամը մի կերպ՝ շատ անսարք մասեր ունեցող մեքենան էր կարգի բերում, որ հանկարծ կյանքի ու մահվան ճանապարհին կանգ չառնի...

Հոկտեմբերի 15-ին անօդաչուի հարվածից զոհվում է Վահրամը՝ երեք երեխային ավանդելով իր զավակը լինելու կոչումն ու անդառնալի կարոտ... //

Մարատ Խաչատրյան. ապրել Սյունիքում՝ նշանակում է լինել Նժդեհի հետեւորդը

Մարատ Վլադիկի Խաչատրյան. ծնվել է 1979թ. դեկտեմբերի 9-ին Քաջարան քաղաքում: Սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 2014-2018 թթ. սովորել է Գորիսի պետական համալսարանում՝ ստացել ճարտարագետ-էներգետիկի մասնագիտություն: Ամուսնացած էր՝ ուներ երկու երեխա:

Մարատը զորացրվելուց հետո աշխատել է «ՀՊՄԿ» փակ բաժնետիրական ընկերությունում. գործընկերները նրա մասին խոսում են անսահման ափսոսանքով, պատմում, որ չափազանց պատասխանատու եւ բանիմաց մասնագետ էր իրենց հերոսացած ընկերը:

Գեղեցիկ ու երջանիկ էր ընտանեկան կյանքը. սիրող, հոգատար հայր ու ամուսին էր, կինը տիտղոս է համարում Մարատի նման հերոսի կին լինելը, երեխաները փոքր են՝ հավատում են հայրիկի վերադառնալու հրաշքին, հավատում են ու կարոտով սպասում...

Մարատը սիրում էր հայրենիքը որդիական հպարտությամբ եւ հայրական հոգատարությամբ, համոզված էր, որ սյունեցի լինելը պատիվ է, պարտք՝ Նժդեհի առաջ. պաշտում էր Նժդեհին, անգիր մեջբերումներ անում նրա խոսքերից:

2016թ. ապրիլի 2-ին Ադրբեջանը փորձեց ներխուժել Արցախ. Մարատը, ով բանակում տանկիստ էր եղել, առանց հապաղելու, մեկնեց մարտադաշտ, վերադարձավ հաղթանակած ու լեյտենանտի ուսադիրներով:

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը լայնածավալ պատերազմ սկսեց. պահեստազորի սպան կամավոր ներկայացավ. վտանգված էին Արցախը, Սյունիքը, հայի հողն ու արյունը: Նրան վստահվեց 25 ժամկետային զինծառայողից կազմված տանկիստների դասակ: Փառահեղ էր տանկիստների ընթացքն ու գործը Ջրականում՝ թիրախները վերացվում էին անհապաղ, մեր տանկիստները փայլում էին, փայլում էին նաեւ դասակի հրամանատար Մարատ Խաչատրյանի աչքերն իր «առյուծների» անթերի մարտից:

Հոկտեմբերի 3-ին եւ 4-ին թշնամական անօդաչուներն աշխատում էին անդադար, նրանց առաջնային թիրախներից մեկը Մարատի դասակն էր:

Հոկտեմբերի 5-ին Մարատը վիրավորվում է՝ վնասվել էր աորտալ երակը: Վիրավոր սպան մահից 15 րոպե առաջ զանգահարում է կնոջը՝ *«Հիշիր, որ քեզ շատ եմ սիրում, քեզ լավ պահիր, երեխեքիս լավ պահիր...»:*

Րոպեներ անց զոհվում է քաջ հայորդին՝ վստահ, որ չենք պարտվելու, որ հայի կամքը կերերա, բայց չի կոտրվի: Զոհվում է հաղթած, քանզի այլ կենսաձեւ չէր ճանաչում... //

Սուրեն Համբարձումյան. «Թուրքի դեմն առնելը թասիբի հարց է»

Սուրեն Բագրատի Համբարձումյան. ծնվել է 1992թ. հունվարի 1-ին Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի Գուդեմնիս գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Ագարակի Եղիշե Չարենցի անվան դպրոցում: Լավ, զարգացած երաժշտական լսողություն ուներ, հաճախում էր երաժշտական դպրոց՝ շվի էր նվագում: Սուրենին սիրում էին բոլորը, ընդգծված բարություն կար պատանի Սուրենի ամեն քայլում, չէր կարող անտարբեր անցնել ուրիշի վշտի ու ցավի կողքով:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Եվրոպական համալսարանի կառավարում բաժինը: 2010-12թթ. ծառայել է հայոց բանակում՝ Սիսիանի զորամասում, ծառայության ընթացքում արժանացել է պատվոգրերի:

Զորացրվելուց հետո Սուրենն աշխատանքի է ընդունվում Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում, բայց զինվորական ծառայությանը կարոտում էր, սիրում էր զինվորականի կյանքը, սիրում էր սահմանին ապրողի գիտակցությամբ: Մի օր էլ, սեփական դիմումի համաձայն, դուրս է գալիս աշխատանքից եւ պայմանագրային ծառայության անցնում Ագարակի զորամասում:

2020թ. սեպտեմբերի 27-ին սկսվեց պատերազմը... Սուրենը դիրքերում էր... Սեպտեմբերի 30-ին հերթափոխն ավարտվել էր՝ նա պիտի տուն գար, բայց դիրքերից իջնելուց հետո ներկայանում է Ագարակի զորամաս եւ կամավոր մեկնում Արցախ:

Համաքաղաքացիները հարցրել էին, թե ինչո՞ւ տուն չի գնում՝ հանգստանալու, պատասխանել էր. *«Թուրքի դեմն առնելը թասիբի հարց է»:*

Մարտական ընկերները նրա մասին խոսում են հպարտությամբ. *«Գաղափարական մարտիկ էր, գիտեր ուր է եկել, գիտեր ինչի համար է կռվում, երբեք հաշվի չի առել թշնամու քանակական առավելությունը, իր կյանքը շատ թանկ էր, բայց մի բան հաստատ է՝ մինչեւ զոհվելը հարյուրի չափ ազերիների է սատկացրել, միշտ առաջ գնալու ձգտում ուներ...»:*

Մարտերը թեժ էին, Սուրենը չէր համակերպվում նահանջելու մտքին, չնահանջեց, որոշումը վերջնական էր՝ կռվել մինչեւ վերջ, որոշեց ու մնաց իր դիրքում մինչեւ վերջ: Վերջը հոկտեմբերի 5-ին էր, երբ թշնամու դիպուկահարը նկատեց համառ մարտիկին... Սուրենն ընկավ իր հողը, պատիվը, թասիբն աննահանջ պաշտպանելիս... //

Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց քաջորդիներին

Գարիկ Մուրադյան. կռվում էր հաղթանակի հավատով

Գարիկ Սերոբի Մուրադյան. ծնվել է 1964թ. հունվարի 16-ին Սիսիանի շրջանի Շաղատ գյուղում, միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում: Գարիկ Մուրադյանին նկարագրելիս բոլորն են շեշտում բացառիկ հայրենասիրությունը, իսկ կապիտան Մուրադյանի եւ բանակի կապը վեր էր բոլոր տեսակի հարաբերություններից՝ բանակը նրա զավակն էր, նրա եղբայրը, պաշտամունքը, աստվածությունը...

1990թ. սեպտեմբերին կազմավորվում էր Սիսիանի ՆԳՆ-ին կից հատուկ գունդը. ազատատենչ սյունեցին, ով Անդոկ իշխանի ծննդավայրից էր, չէր կարող անմասն մնալ. Գարիկ Սերոբի Մուրադյանը կամավորագրվեց: Մոլեգնում էր Արցախը՝ միացում էր տենչում, Սյունիքի հողը տնքում էր հրոսակների ներկայությունից. սկսվեց Արցախյան պատերազմը. Գարիկ Մուրադյանը հարազատ Շաղատ գյուղի ուղեկալի հրամանատար է նշանակվում:

Փառահեղ է նրա մարտական ուղին. Արցախյան առաջին պատերազմում մասնակցել է Սպիտակաշենի (Աղքենդ), Քաշաթաղի (Լաչին), Հադրութի Ազոխ եւ Դրախտիկ գյուղերի, Ծաղկաբերդի (Գյուլիբերդ) եւ բազմաթիվ այլ բնակավայրերի ազատագրմանը: Նա մեկ համոզմունք ու հավատամք ուներ. *«Հայը պետք է իր հայրենիքը անկոտրում նվիրումով եւ հաղաթանակի հավատով պահի»:*

Արցախն ազատ էր, հարաբերական խաղաղություն էր, բայց Գարիկ Մուրադյանը գիտեր, որ խաղաղությունը հաջորդ պատերազմին պատրաստվելու համար է. 1994թ. Սիսիանի նոր կազմավորված գնդում վաշտի հրամանատար էր, հետո գումարտակի շտաբի պետ. բանակաշինության ու պետականաշինության ամենածանր օրերն էին. հայ սպան տեսնում էր ավերակների վրա կառուցվող բանակը, հավատում էր, որ ունենալու ենք հզոր ու անհաղթ բանակ, հայրենի Սիսիանը լքելու մասին խոսք լինել չէր կարող, մինչեւ պահեստազոր տեղափոխվելը ծառայեց հայրենիքին:

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց. Արցախը վտանգված էր, ու Գարիկ Մուրադյանը կամավորագրվեց. սյունեցին գիտի Արցախի գինը, գիտի թուրքին՝ տեսել է այդ ցեղի վայրագությունները, ծանոթ է դրա ձեռագրին...

Հաղթանակի հավատով էր կռվում կապիտան Մուրադյանը, կռվում էր հանուն այն հողի, որն իր ու ընկերների արյունով է ազատագրվել. հոկտեմբերի 2-ին թշնամուն հաջողվեց դիրքային առավելություն գրանցել, Հադրութի մերձակայքում թեժ մարտեր էին՝ թուրքական հարվածային անօդաչուներն անդադար ռմբակոծում էին. ընկավ մեր հերոսը, անմահացավ՝ հաղթանակի անսասան հավատով՝ մեզ պատգամելով ազատ պահել Արցախը, այն սուրբ հողը, որը ներծծված է իր պես քաջերի արյամբ...

//

Չհասցրեց վայելել մանկան թոթովանքի բերկրանքը

Արցախյան երրորդ պատերազմը խլեց մեր զավակներից լավագույններին: Ահավոր դժվար է գրիչ վերցնել՝ նրանց ցավալիորեն անժամանակ ընդհատված կյանքի ուղու մասին գրելու, մանավանդ, երբ նահատակներից մեկը քո տարեկից, հին ու բարի ժամանակներից մտերիմ ընկեր Լեւոն Մարգարյանի Գարիկ կրտսեր որդին է: Սփոփանքի բոլոր բառերն ու արտահայտություններն անդառնալիորեն մաշված ու ժամանակավրեպ են դառնում...

Արցախյան առաջին պատերազմի ժամանակաշրջանում է ծնվել Գարիկ Մարգարյանը՝ 1993 թ. հունիսի 11-ին: Պատերազմի օրերին քաղաքը հրետակոծվում էր, ծննդատունը տեղափոխվել էր փոքրիշատե անվտանգ վայր՝ Կապանի ծայրամասը՝ հոգեբուժարան:

Մանկուց Գարիկը շատ աշխույժ երեխա էր, մեկ տարի շուտ է գնացել դպրոց, քանզի մանկապարտեզում այլեւս անելիք չուներ: Հաճախել է Հունան Ավետիսյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցը: Թեեւ փոքր-մոքր, բայց շատ համարձակ, խիզախ երեխա էր, նաեւ կատակասեր՝ ժպիտը դեմքին: Ամենատխուր պատմությունը կպատմեր ժպիտը երեսին:

«Մի անգամ – վերհիշում է հայրը՝ Լեւոն Մարգարյանը, – *«Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» հեռուստախաղն էի դիտում եւ հընթացս հարցերին պատասխանում: Գարիկը՝ մեկ էլ թե՝ մի հարց էլ ես տամ՝ Այվազովսկին ինչո՞ւ նկարելիս «այս մատը» չի օգտագործել եւ ցուցադրեց իր ցուցամատը: Պահանջվող մեկ րոպեն անցավ, եւ չկարողացա պատասխանել: Ասաց, հայրիկ, հեչ տրամաբանող չես: Այվազովսկին ինչպե՞ս կարող էր այդ մատն օգտագործել, երբ դա իմն է»:*

«Ողջ կյանքում եղել է ինքնուրույն. երբ հարցնում էի, – ինչո՞ւ չես այս բանը սովորել, – պատասխանում էր՝ ինչ-որ պետք է՝ ես սովորել եմ», – սա էլ հոր խոստովանանքն է:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, մեկ տարի սովորելուց հետո մեկնել զինվորական ծառայության, որի ավարտից հետո շարունակել բուհական կրթությունը:

Պատերազմի առաջին օրերից առաջնագծում էր, թեեւ հարազատների հեռախոսազանգերին պատասխանում էր՝ դեռ Գորիսում եմ:

Հոկտեմբերի 15-ին ծանր վիրավորվեց գլխից, առաջին վիրահատությունը Գորիսում էր, հետո՝ մայրաքաղաքում: Բայց այդպես էլ կոմայից դուրս չեկավ, եւ անմահացավ հոկտեմբերի 29-ին:

Ամուսնացած էր, ավա՜ղ, այդպես էլ չհասցրեց վայելել մանկական թոթովանքի բերկրանքը...

Գարիկի մարդ տեսակի մասին լավագույնս ներկայացրին նրան դասավանդած ուսուցիչները: Կրթօջախի տնօրեն Արուս Միրզոյանի աշխատասենյակում հանդիպեցի նրանց: Ընդգծված ափսոսանք կար նրանց խոսքում, նաեւ վիշտ ու ցավ: Բայց գրավիչն այն էր, որ ականատեսի խոսքեր էին՝ պարզ ու անմիջական, ուստի հարմար գտա դրանք մեջբերել նույնությամբ:

Պատմության ուսուցչուհի Գայանե Ալավերդյան:

Գարիկը մեր լույս տղաներից էր, աչքերը ծիծաղում էին, քիչ է պատահում, որ տղա երեխայի աչքերն այդքան ծիծաղկոտ լինեն: Շատ շարժուն երեխա էր, տեղը նստել չուներ. անընդհատ՝ աջ-ձախ: Չափազանց հետաքրքասեր էր. հիշում եմ՝ Ակոռիի ճակատամարտի ուժերի հարաբերակցությունը ներկայացրի, զորքերի թվաքանակը, այն է՝ մեր չորս հարյուր ռազմիկը մի քանի հազարի դեմ էր կռվում: Ընդդիմացավ՝ չեմ հավատում: Ասացի, Գարիկ ջան, այդպես էլ է լինում, հայրենիքի համար էին կռվում, տեղանքը լավ ծանոթ էր հայերին: Մտածեց, մտածեց, ասաց՝ ճիշտ եք ասում, այ հիմա հավատում եմ: Ինձ թվում է՝ այդ հավատն իրեն տարավ մարտադաշտ: Միշտ կրկնում էի՝ այդ տղաներն ընկան հայրենիքը սրտում: Այլ բան պետք չէ մտածել: Երբեմն դասապրոցեսում (այն ժամանակվա պահանջները մի քիչ ուրիշ էին) ինքը գեղարվեստական գիրք էր կարդում: Այդպիսի հետաքրքիր երեխա էր Գարիկը: Դասը պատմում էր գեղեցիկ, տրամաբանված, ասում էր՝ ընկեր Ալավերդյան, Դուք միշտ ասում եք՝ պատմական գրագիտություն, ես ձգտում եմ դրան: Գիտեմ, Գարիկ, – պատասխանում էի, – դրա համար գնահատում եմ քո ձգտումը: Խելացի, լավ աշակերտ էր, ուստի կատարվածի համար անչափ ափսոսում եմ...

Մաթեմատիկայի ուսուցչուհի Սուսաննա Աբրահամյան:

Չորրորդ դասարանից մինչեւ 10-րդ դասարան Գարիկին մաթեմատիկա եմ պարապել: Նա շատ պայծառ երեխա էր, նպատակասլաց, ընկերասեր, մարդկային, շփվող, նաեւ՝ համարձակ: Հիշում եմ. մի անգամ մշակույթի կենտրոնում միջոցառում էր, Երեւանից էին եկել, հարցրին՝ ովքե՞ր կարող են բեմ բարձրանալ: Ինքը դահլիճից թռած գնաց բեմ: Սրանով ես նրա ռիսկի գործոնն եմ նշում: Մաթեմատիկայից չէր փայլում, բայց մարդ տեսակով իրեն սիրել էր տալիս: Դպրոցն ավարտելուց հետո, որտեղ տեսնում էր, ինձ հարազատի պես էր վերաբերվում: Սյուս մայթից, որ տեսներ, կանցներ փողոցը՝ կգար՝ կգրկեր: Շատ-շատ եմ ափսոսում նրա մահվան համար, Գարիկ անունը լսելիս անընդհատ հուզվում եմ: Իր նման շատ-շատ նահատակներ ունեցանք, բոլորի համար խորունկ ցավ եմ ապրում: Առավել եւս ցավում եմ, որ իմ զավակի պես ընդունել եմ Գարիկին: Այդ նույն չափ վշտանում եմ իմ աշակերտ Շանթ Խաչատրյանի համար, որի ճակատագրի մասին ոչինչ հայտնի չէ. անհետ կորած է համարվում: Գարիկի խոսքերը շատ գեղեցիկ էին, զգացվում էր, որ բանասերի որդի է՝ առոգանությունը, հնչեցրած խոսքը, միջոցառումների ժամանակ դա էլ է խիստ տպավորվել իմ մեջ: Նրա կորստով լուսավոր մի կետ պակասեց մեր կյանքից: Իմ ափսոսանքը չափ ու սահման չունի...

Հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Կարինե Նուրիջանյան:

Գարիկը հայրենապաշտ ու ընկերասեր անձնավորություն էր: Անգիրներ էի հանձնարարում, հատկապես ընտրում էր հայրենիքին նվիրված բանաստեղծությունները: Եթե պահանջվող թեման հայրենասիրությունը չէր, հարցնում էր՝ կարելի՞ է հայրենիքին նվիրված բանաստեղծություններ սովորեմ: Նրա կուռքը՝ Շիրազն էր, պոետի՝ հայրենիքին եւ մորը նվիրված բանաստեղծություններն էր սիրում անգիր անել: Քչախոս, հավասարակշռված անձնավորություն էր, դա հաստատապես կարող եմ ասել: Մեկ էլ այն, որ մեր հերոս տղաների ճախրանքն անավարտ չի մնա, նրանց հիշատակը չի խամրի...

Կենսաբանության ուսուցչուհի Լիլիթ Դավթյան:

Գարիկի դասղեկն եմ եղել 10-րդ դասարանում: Մինչ այդ ուրիշ դասղեկ ուներ նա: Բայց ծանոթ էի խառնվածքին, նախասիրություններին, որովհետեւ նրան կենսաբանություն էի պարապել: Ավարտական դասարանում միանգամից դժվար էր դասղեկություն անելը, բայց դասարանն ինձ ծանոթ էր, եւ ամենի ինչ սահուն անցավ: Գարիկն իմ մեջ տպավորվել է խելացի, ընկերասեր, աշխույժ, կենսախինդ աշակերտ: Դասարանում չարաճճի երեխաներ կային, Գարիկը հետ չէր մնում նրանցից, ինքն էլ էր մթնոլորտ ստեղծում: Ճիշտն ասած՝ անհարմար էի զգում ծնողին բողոքել, որովհետեւ հայրը դպրոցի տնօրեն էր: Բայց մի անգամ ակնարկեցի հորն այդ մասին: Բարեբախտաբար միայն ժպտաց Մարգարյանը...

Տխուր ապրումները խանգարում են այլ մանրամասներ հիշել նրա դպրոցական կյանքից: Գուցե որոշ ժամանակ անց հնարավոր լինի ավելի երկար խոսել, հուշեր ներկայացնել, բայց հիմա անչափ դժվար է...

...Մանկավարժների հետ զրույցից հետո մի ուշագրավ փաստ հայտնեցին: Գարիկի համադասարանցիները որոշել են նորոգել դպրոցի պատմության կաբինետը եւ այն կոչել իրենց զոհված դասընկերոջ անվամբ...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Խոսք հիշատակի

Գերասիմ Դավթյան



Երկրային կյանքին հրաժեշտ է տվել մեր հայրենակից, ՀՀ վաստակավոր տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու, Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Գերասիմ Վոլոդյայի Դավթյանը:

Ծնվել է 1932 թ. Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո նյութական սուղ պայմանների պատճառով մոտ երկու տարի աշխատել է արտադրությունում: 1952-57 թթ. սովորել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում եւ գերազանցության դիպլոմով ավարտել այգեպտղաբանջարաբուծական ֆակուլտետը: Ստացել է անվանական կրթաթոշակ, ակտիվորեն մասնակցել ինստիտուտի հասարակական աշխատանքներին: Ուսումն ավարտելուց հետո մնացել է ինստիտուտում եւ հարազատ բուհում զբաղվել գիտամանկավարժական ու հասարակական գործունեությամբ: 1957-58 թթ. ինստիտուտի ուսանողներից կազմված մեխանիզատորական ջոկատների հետ մասնակցել է Կուստանայի մարզի խամ ու խոպան հողերում բերքահավաքի աշխատանքներին:

1959 թ. ընդունվել է ասպիրանտուրա՝ «Գյուղատնտեսական էկոնոմիկա» մասնագիտության գծով: Կարճատեւ ընդմիջումներով մոտ 20 տարի հաջողությամբ ղեկավարել է բուհի կուսակցական կազմակերպության գործունեությունը՝ չկտրվելով դասախոսական եւ գիտահետազոտական աշխատանքներից: 1964 թ. հաջողությամբ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն՝ ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, իսկ 1967-ին դոցենտի կոչում:

1965-81 թթ. ղեկավարել է գյուղատնտեսական ինստիտուտի գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ու պլանավորման ամբիոնը:

1983-2000 թթ. ընթացքում Գ. Դավթյանը զբաղեցրել է տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնը:

Գ.Դավթյանը մեծ ավանդ ունի նաեւ ուսումնական ձեռնարկների, առավել հրատապ թեմաների մասին դասախոսությունների եւ մենագրությունների հրատարակման գործում: Նրա համահեղինակությամբ 1975 եւ 1982 թթ. լույս են տեսել «Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում» եւ «Տնտեսամաթեմատիկական մեթոդների կիրառությունը գյուղատնտեսության մեջ» ուսումնական ձեռնարկները, իսկ 88-89 թթ.՝ «Պլանավորման հիմունքները գյուղատնտեսական ձեռնարկություններում» եւ «Լրիվ տնտեսական հաշվարկը, ինքնածախսածածկումը եւ ինքնաֆինանսավորումը գյուղատնտեսական ձեռնարկություններում» դասախոսությունները:

Հրատարակել է «Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում» դասագիրքը, 212 գիտական հոդված եւ գիտամեթոդական աշխատանքներ, հեղինակ է երեք մենագրության եւ մեկ բրոշյուրի, համահեղինակ է հինգ ուսումնական ձեռնարկի, գործուն մասնակցություն է ունեցել համալսարանի, մասնավորապես տնտեսագիտական ֆակուլտետի ուսուցման եռաստիճան համակարգի պետական կրթական չափորոշիչների եւ 2002, 2004, 2007 եւ 2009 թվականների ուսումնական պլանների մշակման գործընթացներին:

1994 թ. ընտրվել է ՀՀ գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ: 1999 թ. Հայաստանի ԳԱԱ-ի գիտական խորհուրդը նրան շնորհել է պրոֆեսորի կոչում:

1998 թ. ՀՀ գյուղատնտեսության գիտատեխնիկական քաղաքականության եւ մի քանի գիտական խորհուրդների անդամ էր:

2000 թ. հունիսի 24-ից նշանակվել է Հայաստանի ԳԱ-ի ռեկտորի գլխավոր խորհրդական՝ կատարելով միաժամանակ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ամբիոնի վարիչի պարտականությունները:

Բազմամյա բեղմնավոր աշխատանքի ու մասնագետների պատրաստման գործում ունեցած ծառայությունների համար 1980 թ. նրան շնորհվել է Հայկական ԽՍՀ վաստակավոր տնտեսագետի պատվավոր կոչում: 2000 թ. գիտության եւ կրթության բնագավառում ներդրած նշանակալի ավանդի համար ՀԳԱ-ի 70-ամյակի կապակցությամբ Գ. Դավթյանը պարգեւատրվել է Անանիա Շիրակացու մեդալով:

Գ. Դավթյանը ուշադիր էր կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի նկատմամբ: Առանձնակի հոգատարություն էր ցուցաբերում երիտասարդ կադրերի որակական աճի ու կազմակերպչական ունակությունների զարգացման նկատմամբ: Նրա նախկին սաներ, համատեղ աշխատանքի շատ երիտասարդ գործիչներ այսօր դարձել են արտադրության հմուտ կազմակերպիչներ, գործարար մարդիկ, դասախոսներ, գիտական աշխատողներ, պետական ու քաղաքական գործիչներ:

Պրոֆեսոր Գ. Դավթյանն ինչ պաշտոնում էլ որ աշխատել է, դրսեւորել է սկզբունքայնություն, ազնվություն, մարդկանց նկատմամբ հոգատարություն, բարեխիղճ վերաբերմունք եւ պատասխանատվության բարձր զգացում հանձնարարված գործի նկատմամբ:

Ճանաչված դասախոսի, գիտության նվիրյալի, բարի խորհրդատուի հիշատակն անմար կմնա նրա գործընկերների, բյուրավոր ուսանողների եւ ընդհանրապես նրան ճանաչողների սրտերում: //

Խոսք հիշատակի

Հրանտ Գրիգորյան

Սկիզբը՝ էջ 1

կայաններ» մասնագիտացմամբ, ուստի վստահեցին ռելեական պաշտպանության եւ ավտոմատիկայի ծառայության ճարտարագետի պաշտոնը, մոտ 15 տարի եղել է ծառայության պետը, 1982 թ. նշանակվել է գլխավոր ճարտարագետի տեղակալ, 1993-ից նշանակվել է գլխավոր ճարտարագետ: Էներգետիկների համար պատասխանատու ժամանակաշրջան էր Արցախյան առաջին պատերազմը. անքուն գիշերներ, գերլարված ճիգեր էին պահանջվում հրետակոծությունից տուժած ենթակայանների եւ էլեկտրագծերի նորոգումն իրականացնելու համար: Այդ ամենում նա իր եւ իր ենթակաների հանդեպ խիստ պահանջկոտ էր: Վարպետ-դաստիարակ է եղել երիտասարդ կադրերի համար, նրանց սիրով փոխանցել էր իր փորձն ու գիտելիքները, եղել նրանց բարի խորհրդատուն եւ ուսուցիչը:

Իր մասնագիտական բարձր որակների շնորհիվ նա մասնակցել է 400 ԿՎ «Իրան-Հայաստան» 3-րդ գծի ծրագրի եւ 220 ԿՎ «Ագարակ» ենթակայանի վերակառուցման աշխատանքներին:

2007 թ. նրան շնորհվել է «Վաստակավոր էներգետիկ» բարձր կոչում:

Անուրանալի է Հրանտ Գրիգորյանի ավանդը Սյունիքի տարածաշրջանի էներգետիկայի զարգացման բնագավառում: Աշխատանքին նվիրվածության եւ պարտաճանաչության համար բազմիցս խրախուսվել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության տնօրինության կողմից:

Բազմափորձ ճարտարագետի, պարկեշտ մարդու, հավատարիմ ընկերոջ հիշատակը միշտ վառ կմնա ճանաչողների սրտերում:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կոլեկտիվը եւ տնօրինությունը, հանձին գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, խորապես վշտացած են Հրանտ Գրիգորյանի մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի հարազատներին ու մտերիմներին:

«ՁԱՆԳԵԶՈՒՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ
ՌՈԲԵՐՏ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

- Մարզի տնտեսության կարիքները և հասարակության կրթական պահանջմունքները բավարարող ճարտարագիտական կրթության ապահովումը,
- տարածաշրջանում խոշոր տեխնոլոգիական կենտրոն դառնալը,
- մարզի տնտեսությունը բարձրորակ ճարտարագետներով և արտադրության կառավարիչներով ապահովելը,
- տարածաշրջանի գիտատեխնիկական ներուժի հզորացմանը նպաստելը:

ՄԵՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տեղեկատվական համակարգեր
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ
- Տնտեսագիտություն
- Լեռնային գործ եւ օգտակար հանածոների արդյունահանում
- Օգտակար հանածոների հարստացում
- Շինարարություն
- Մետալուրգիա

Ք.ԿԱՊԱՆ, ԲԱՂԱԲԵՐԴ 28 | (0285) 5 46 80 , (0285) 5 34 61
www.haphkapan.com | baghaberd@seua.am

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց Երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 31.03.2021թ.: